Թոթիր փախիր, մեծն է սա իմ բոլոր որսերէն,
Թևիդ վրի կոյսն եմ խլել քաջ Ալաններէն։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԷՆ ԳԻՒՂԱՊԵՏԻՆ, ԷՊԻՍ. Բ. ԳԼԽԻ 8։

Բանաստեղծութեան գերազանցութիւնը կայանում է ոչ նրանում, որ նոյնահանգ է կամ թէ բառերի շարամանութիւնը կատարեալ է, այլ նրանում՝ երբ բանաստեղծը կարողանում է իւր ձեռնամուխ եղած առարկայն նկարագրել իսկութեամբ, ինչպէս է կամ էր էն ժամանակումը, ինչպէս ստեղծել է բնութիւնն, որ շատ բարձր է քան զամենայն մարդկային կարողութիւնն. ընդհակառակը էն կորցնում է իւր յարգանքն։

Եթէ "Փունջի", պարոն հեղինակն արդարացնում է հեղինակի կոչումն, ի հարկէ չի վշտանալ էս իմ հարևանցի նը-կատողութիւններէն, և կաշխատէ ջրել իմ կարծիքները հաստատուն փաստերով։

ԳԱԼՈՒՍՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆ.

Ի Թ-վրէշ։

ԱԶԳԱՅԻՆ

Վ. ԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ.

Յառաջակայ Սեպտեմբեր ամսոյ սկիզբներում Վ. ԵՀ. Հայրապետ ի Ռիւբականէ պիտի վերադառնայ այսր ի Մայր Ս. Էթոռս։

ԳԱՎՐԻԺՈՑ ՀԱՅՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎԵՐԱՑ.

Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս՝ քաջ ղղալով իւր պարտաւորութեանց և հոգոց մէջ՝ նախամեծարը, և ստանձնած վիճակին մերաղնեայ մանկաւոյն դաստիարակութեան և կրթութեան ամենակարևոր պէտքը և նշանակութիւնը, ինչպէս որ ի Վ. ԵՀ. Հայրապետէ հրաման և հրահանգ ընդունած էր, ի Գավրէժ հասանելէն մի քանի օր զկնի՝ իւր ուշադրութիւնը նուիրած է վիճակին կեդրոնն եղած քաղաքին Հայոց Ազգային Ուսումնարանի դրութեան վերայ, և առանց յապաղելոյ ձեռնարկելով նորոգ Հոգաբարձութեան ընտրութեան, առաջարկած էր ի հաստատութիւն առ Վ. ԵՀ. Հայրապետ. զոր և Վ. ԵՀ. Հայրապետ Օրհնութեան Կոնդակաւ հաստատելով՝ յորդորած և խրախուսած էր ստանձնած պաշտօնները արթնութեամբ կատարել և արդիւնաւորել։

Արդ կփութամք աւետել, զի նորընտիր Հոգաբարձութիւնն ևս Գեր. Առաջնորդի հետ ի միասին՝ համամտութեամբ և փոխադարձ աջակցութեամբք ոգևորեալ՝ նախ և յառաջ Ուսումնարանի նիւթական ապահովութիւնը լրացնելոյ սկսած և յաջողած են բաւական մեծ գումար հաւաքել, ինչպէս առ Վ. ԵՀ. Հայրապետ մեր յայտարարած է Անդրէաս Արքեպիսկոպոսն, յորմէ արժան կը համարիմք

կարևոր պարբերութիւնը աստանօր քաղել և հաղորդել ի գիտութիւն և յուրախութիւն սիրելի Ազգայնոց մերոց։

«Անդր քան զչափ ակնկալութեան իմոյ շարժեցան ազգայինք քաղաքիս ի նախանձ բարի. յորժամ Հոգաբարձուն քաջալերութեամբք ի խրախուսական բանից գծագրելոց ի Կոնդակի Վեհափառութեանդ, նախ ինքեանք նշանակեալ ի ժապաւինեալ մատենին վաւերացելոյ յինէն զնուիրագրամս իւրեանց, ապա հրաւիրեցին ի նոյն զգականաւորսն ի ժողովրդականաց, որք ամենայն սիրով նուիրեցին զինչ ինչ քանակութիւն դրամոց յօգուտ ուսումնասանին, որով հանգանակեցան աւելի քան զ3000 թուման պարսից. (թումանն արժէ 2 ռուբլի 85 կոպէկ արծաթ Ռուսիոյ)։ Որպէս երևի ի ցուցակէ նուիրատուաց, զոր ամենախոնարհաբար առաջի առնեմ ընդ այսմ Սրբոյ Օծութեանդ, մասնակից եղեն այսմ ընծայաբերութեան Բարձրապատիւ Հիւպատոսն Օսմանեան Տէրութեան Պէհճէթ Էֆէնտի եւ Խրիտոնիղի վաճառականական ընկերութիւն Յունաց։ Նուիրատուութիւնքն դեռ ևս ունին շարունակիլ եւ մեծագոյն մասն ի նուիրագրամոց արդէն իսկ յանձնեալ է Հոգաբարձութեան Դրպրոցին եւ եղեալ առ ապահով անձինս ի շահաբերութիւն 12 առ 100 մինչ ցգնել հաստատուն կալուածս յանուն ուսումնարանին։ Նկատելով զայս օրինակ յաջողութիւն մերոյ ձեռնարկութեան կարելի է յուսալ ընդ ապահովութիւն վարժարանին ըստ նիւթական կարողութեան եւ հետեւաբար ընդ յառաջադիմութիւն մերազնեայ մանկտեաց քաղաքիս յետ ժամանակաց»։

Ուստի Երարատն իւր խորին շնորհակալութիւնքը յայտնելով առ Գ-ուր. Անդրէաս Եպիսկոպոս, առ նորընտիր անդամն Հոգաբարձութեան, առ նուիրատուս ի նպաստ յիշեալ ուսումնարանի և առ Հայկազն ժողովուրդն, կբաղձայ որ՝ այսպիսի սիրով և փութով յարատևելով՝ փոխադարձ աջակցութեամբք ընդ փոյթ յաջողին ուսումնարանի ուսումնական մասին արդիւնաւորութիւնը ևս ապահովել և մշանջենաւորել՝ ինչպէս որ Հայաստանեայց Ազգի և Եկեղեցւոյ օգուտ, պայծառութիւն և յառաջադէմ փառաւորութիւնն կպահանջէ, միանգամայն Վ. Հ. Հայրապետի ակնկալութիւնքը և իղձերը կպսակեն։

Նաև գիւղերը առանձին և խորին ուշադրութեան առնլով՝ ըստ ներելոյ միջոցացն Գ-ուր. Անդրէաս Եպիսկոպոս անշուշտ կյաջողի վիճակին ընդհանուր մտաւոր և բարոյական զարգացման և յառաջադիմութեան համար՝ արդէն հիմնուած դպրոցները բարեկարգելոյ և արդիւնաւորելոյ և իկարևոր տեղիս նոցա թիւը բազմապատկելոյ անխոնջ ջանիւք և արդիւնատու կարգադրութեամբք։

Կարևոր կդատիմք աստէն յարել նուիրատուաց անուանքը ընդ քանակութեան նուիրանացն։

Ա. Հաւասիկ։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԴԱՎՐԻԺՈՑ։

	Ռուբ.
Անդրէաս Եպիսկոպոս . .	50
Բէհճէթ Էֆէնտի	100
Խրիտոնիղի վաճառական Ընկերութիւն Յունաց	250
Փաշախան Սարթիփ Պարսիկ . .	60
Ծատուր Խան Սէթ-Խանեան . .	50
Արզուման Նազար Բէկեանց վաճառականապետ	200
Աստուածատուր Առաքելեանց . .	200
Աստուածատուր Ղարաբէկեան . .	150
Աբրահամ Կ. Վարդանեանց . .	250
Յարութիւն Թումանեանց . .	200
Յովակիմ Ֆէնէրճեանց . . .	200
Յարութիւն Նազարբէկեանց . .	150
Սարգիս Տէր Օհանեանց . . .	100
Գասպար Շահնազարեան . .	100
Յակոբ Զ. Խուտավերտեանց . .	100
Ահարոն Զարկարեանց . . .	150

Մկրտում Առաքելեան . . .	55
Վարդան Շիրմազանեանց . .	10
Ալէքսան Տէր Յակովբեանց . .	100
Ղազար Մելիք Բարաջանեանց . .	7
Մատթեոսի Ալէքսան Մատթեոսի Պետրոսեան	10
Ասրի Մ. Պետրոսեանց . . .	150
Մարգար Նազար Բէկեանց . .	10
Ալէքսան Սարգսեան Բժշկեանց . .	15
Յարութիւն Հայրապետեան . .	10
Դանիէլ Գրիգորեան . . .	7
Զաքարիա Խաչակեան . . .	4
Ղունկիանոս Գալստեան . . .	5
Նիկողայոս Մելիք Բարաջանեան . .	10
Համբարձում Տէր Յովսէփեան . .	50
Սարգիս Մովսէսեան . . .	20
Յարութիւն Գորոյեանց . .	5
Յակոբ Ճանիեանց . . .	50
Կարապետ Յակովբեան . . .	2
Գալուստ Նիկողայոսեան . . .	2
Թովմաս Ա. Մատթեոսի Անանեանց .	20
Գումարն	2792

«ՈՐ ՈՒՆԻՑԻ ԱԿԱՆՋՍ ԼՍԵԼՈՑ՝ ԼՈՒԻՑԷ»։

Պ. Ակայորդէ՝։

Մշակ լրագրի 33 թուոյն մէջ կարդալով ձեր տխուր դիտողութիւնները Էջմիածնայ նորակառոյց Ա՛եմարանի բացման ու Ծրագրի մասին՝ իրաւն ասեմ ես ևս տխրեցայ. բայց չկարծես թէ այն դիտողութեանց ճշմարտութեանը համար, ոչ. հապա անհնարին ցաւ տուաւ սրտիս այն՝ որ քո խորհրդածութիւնները կծու երգիծաբանութեամբ զեղուն ու ակաղձուն լինելով՝ օտարազգւոյ համար նոյն իսկ չէին ներելի, թող թէ Հայու մը համար, մանաւանդ Ակայորդի անուամբ կնքուած Հայու մը. . . .

Զեր այդ սկայական կամ որ նոյն է հսկայական յարձակման թղուկի մը ըրած աննշան շարժումն կամ խլրտումն անզօր եղածը ձեզ հասկացնելու համար, նա մանաւանդ աչքիդ առջև պատկերացնելու համար հոգւոյդ անբարեխնդրութիւնն ու կրից սաստկութիւնը, զոր բնականապէս թշնամական կիրքով լեցուած մարդը ինքնին չտեսներ, գրիչս առի ըրած խորհրդածութիւններդ քննելու, թէև անոնք աւելի արհամարհանաց արժանի էին քան եթէ քննութեան։ Մէկ գլխաւոր պատճառն ալ այն է՝ որ մեր միամիտ աղգայնոց ցոյց տամ թէ իրենց որդւոց համար վեցամեայ աշխատանքով պատրաստուած հոգևոր կերակրոյն (իմա՛ Ա՛եմարանին) մէջ սիրտ խառնող սկայական ճանճ մի ընկած է, որպէս զի տակաւին չբացուած Ա՛եմարանին վերայ բզզող ու տզզող ճանճերէն զգուշանան։

Այո՛, զգուշանան մեր խեղճ ազգայինք զոյս վարձուած գրիչներ կամ անգործ թուղթ մրողներ, «Ազգին աչքը կբանամ ասելով՝ կառաջնորդեն ի մոլորութիւն մտաց և յանտարբերութիւն, գործունեայ անձանց վերայ կուզեն յուսահատութիւն բերել, մինչդեռ ոչ եթէ Ա՛եմարանի մը կառուցումը, այլ նոյն իսկ փոքրիկ դիւղական դպրոցի մը, որ և իցէ ազգաշահ ձեռնարկի մը սկզբնաւորութիւնը, հարկ էր նոցա խրախուսել փոխանակ մտացածին թերութեանցը վերայ ծուռումուռ խորհրդածութիւններ զգայուելու։

Դու նախ՝ շատ անտեղի է առաջին զարմանքդ, զոր ունեցած ես պապո՛ելի Ա՛եմարանի (մարդ կարծեցիր Ա՛եմարանը) Ծրագրին Պոլիս տպուելուն վերայ և ա-